ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.10.2019
343-45

Երևանի քաղաքապետ
պարոն Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել Հանրային իրազեկման և մոնիթորինգի կենտրոնը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: ՀԿ-ն Դալմայի այգիների վերաբերյալ տեղեկություն ստանալու հարցմամբ քաղաքապետարան է դիմել 2019 թվականի սեպտեմբերի 9-ին: Սեպտեմբերի 27-ին ՀԿ-ն ստացել է պատասխան գրություն, որով սակայն Երևանի քաղաքապետարանը չի տրամադրել լիարժեք պատասխան՝ պատճառաբանելով, թե չի տիրապետում պահանջվող տեղեկություններին: Հարկ է սակայն նշել, որ ոլորտին առնչվող մյուս բոլոր պետական կառավարման մարմինները, որոնց ուղղվել է նույն հարցադրումները, որպես տեղեկություն տնօրինող նշել են հենց Երևանի քաղաքապետարանը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ինչքա՞ն է եղել Դալմայի այգիների 2003 թվականի դրությամբ ընդհանուր տարածքի ստույգ չափը՝ ներառյալ նաև պահպանման գոտու (ինչն այն ժամանակ ունեցել է) չափը: Ի՞նչ իրավական ակտով է հաստատում է վերոհիշյալ տեղեկությունը:

2. Մինչև Հայաստանում տեղի ունեցած Հողային բարեփոխումը՝

2.1. որտե՞ղ են կոնկրետ տեղակայված եղել Երևանի Դալմայի այգիներում գործած նախկին կոլտնտեսությունները,

2.2. ի՞նչ նշանակության հողեր են եղել այդ տարածքների տակ ընկած հողերը,

2.3. որքա՞ն է եղել դրանց տարածքը ընդհանուր և առանձին-առանձին:

2. Ի՞նչ նշանակության հողեր են դրանք ներկայում և որքա՞ն է դրանց տարածքը (ընդհանուր և առանձին-առանձին):

3. Ո՞րն է եղել Դալմայի այգիների 4 (չորս) կոլտնտեսությունների հողերը տվյալ կոլտնտեսությունների կոլտնտեսականներին անհատույց և անժամկետ սեփականության չհանձնելու պատճառը:

4. Ի՞նչ Ծրագրեր կան, կամ՝ նախատեսված են քաղաքապետարանի կողմից, այդ տարածքների կառուցապատման վերաբերյալ:

5. Որքա՞ն է եղել Դալմայի այգիների հողատարածքների 1 քմ-ի վաճառքի գները (նվազագույնը և առավելագույնը), անկախ այն հանգամանքից, թե գնորդը կամ վաճառողը ով է եղել՝ ֆիզիկական, թե իրավաբանական անձ:

6. Խնդրում ենք տրամադրել Երևանի քաղաքապետի 2004 թվականի սեպտեմբերի 10-ի N1741-Ա որոշման պատճենը և/կամ հղումը:

7. ՀՀ կառավարության 2003 թ. մարտի 27-ի N 1941-Ա որոշման 3-րդ կետով մի շարք նախարարների հանձնարարված էր Երևանի քաղաքապետի հետ համատեղ, ոլորտի ՀԿ-ների մասնակցությամբ քննարկել և առաջարկություն ներկայացնել Դալմայի այգիներում անտառի հիմնման և պահպանման միջոցառումների վերաբերյալ: Խնդրում ենք տեղեկացնել՝ ինչ է արված կառավարության այդ հանձնարարականի կատարման ուղղությամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան